«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործային կարողությունների ձևավորումը հայոց լեզվի դասավանդման գործընթացում:

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդանյան Լիդա

Ուսումնական հաստատություն՝ հմ.132 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3-4

ԳԼՈՒԽ 1.

Սովորողների մեջ համագործային կարողությունների ձևավորումը հայոց լեզվի դասավանդման գործընթացում----------**5-10**

ԳԼՈՒԽ 2.

Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի կիրառումն ու արդյունավետությունը:----------**11-16**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման կազմակերպման եղանակները տարբեր ժամանակներում եղել են տարբեր: Հայտնի են և առանձնացվում են ուսուցման կազմակերպման հետևյալ պատմահասարակական եղանակները՝ ուսուցման անհատական եղանակ,ուսուցման խմբային եղանակ և ուսուցման համագործային եղանակ: Վերջինս համեմատաբար ուշ է ձևավորվել և մշակվել: Այս գործում մեծ ավանդ ունի Վիտալի Դյաչենկոն: Նա զարգացրել է Ռիվինի ուսմունքը, ձևակերպել համագործային ուսուցման եղանակի սկզբունքները:

Հետազոտական այս աշխատանքում ներկայացվում է ուսուցման համագործային եղանակն իր հիմնական սկզբունքներով: Անդրադառնում ենք ուսումնական պարապմունքների երեք տեսակներին՝ ընդհանուր ճակատ, ուսումնական երթուղի և սովորողների ժամանակավոր խմբեր: Հակիրճ նկարագրվում է յուրաքանչյուր տեսակ, և նշվում են տարբերությունները: Համագործային ուսուցման պարապմունքների սկզբունքներին անդրադառնալիս կարևորվել է գլխավոր սկզբունքը.

յուրաքանչյուր երեխա նպատակ է, յուրաքանչյուր երեխա՝ միջոց . ամեն ինչ յուրաքանչյուրի համար, յուրաքանչյուրի օգնությամբ, յուրաքանչյուրի միջոցով:

Համագործային ուսուցման պարապմունքներ կազմակերպելու և իրականացնելու համար շատ կարևոր է նաև ուշադրություն դարձնել ուսումնական առարկայի բովանդակության կառուցվածքին և նախապես կազմել ուսումնական ծրագրի յուրացման երթուղի, ինչը նույնպես նշվում է այս աշխատանքի մեջ:

Ներկայացվում են նաև համագործային ուսումնական պարապմունքների ընթացքում ծագող հնարավոր դժվարությունները և դրանք հաղթահարելու միջոցներ:

Համագործային ուսուցման եղանակի մասին խոսելիս առավել հանգամանալից անդրադառնում ենք անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկային, որը անցած նյութի կրկնությունն ու ամրապնդումը կազմակերպելու շատ հարմար ու արդյունավետ ձև է: Նկարագրվում է այս մեթոդիկայով աշխատանքը կազմակերպելու ընթացքը , մեթոդիկայի կիրառումը «Ածական անուն» բաժնի կրկնությունը կազմակերպելիս:

Հետազոտության թեման որքանո՞վ է առնչվում ուսուցման գործընթացի ներկա խնդիրներին ու կարևորվում: Ոչ մեկի համար այսօր գաղտնիք չէ, որ ապրում ենք հարուստ ու բազմաբնույթ տեղեկատվության դարում:Երեխայի համար գնալով ավելի ու ավելի դժվար են դառնում կենտրոնանալը, մի նյութով երկար զբաղվելը, սովորելն ու հատկապես մտապահելը.չէ՞ որ նա կարող է առանց ջանքերի օրական հազար տեղեկություն ստանալ՝ իր համար հետաքրքիր ու պիտանի, բայց ավելի հաճախ՝ ոչ պիտանի ու վնասակար: Ուրեմն նպատակահարմար է կիրառել այնպիսի մեթոդներ, որ սովորողը ակտիվ մասնակիցը լինի դասապրոցեսի, հնարավորինս շատ լինի զբաղված, չձանձրանա, սովորի ու սովորեցնի: Կարծում ենք, որ համագործային ուսուցման եղանակը տալիս է այդպիսի հնարավորություններ՝ դրանցով դառնալով հետաքրքիր ու արդիական:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել համագործային ուսուցման եղանակի առանձնահատկությունները, անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան, նշել դրա առավելությունները անցած նյութի կրկնության ու ամրապնդման դասաժամ անցկացնելիս, կիրառել մեթոդիկան և ոչ միայն ամրապնդել սովորողների գիտելիքները, այլև նրանց մեջ ձևավորել ու զարգացնել ինքնուրույնության,նաև համագործակցության, հանդուրժողականության,

փոխօգնության և փոխստուգման կարողություններ: Համոզված ենք, որ այս ամենը կնպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 1

Համագործային ուսուցման եղանակ

Ուսուցման մի եղանակից մյուսին անցնելու պատմական օրինաչափությունը դեռևս չի նշանակում, որ անհապաղ և անպայման պետք է երևան գա ուսուցման հաջորդ՝ համագործային եղանակը: Այն դեռ պետք է կառուցել՝ հաղթահարելով անցման շրջանի օբյեկտիվորեն առկա յուրօրինակ դժվարություններն ու հիմնախնդիրները:

Կրթությունը հասարակության բոլոր անդամներին հասանելի դարձնելու համար կրթական համակարգն օբյեկտիվորեն ուսուցման խմբային եղանակից անցում պետք է կատարի ուսուցման համագործային եղանակի, որը լուծումներ է առաջարկում այսօրվա մարտահրավերների համար [3, 14]:

Իսկ սուբյեկտիվ մոտեցումներից խուսափելու համար անհրաժեշտ էր ձևակերպել ուսուցման համագործային եղանակի սկզբունքները: Հենց դա էլ արեց Վ. Դյաչենկոն՝ հետագայում դրանք անվանելով ուսուցման ամբողջական սկզբունքներ: Դրանք են՝

- կրթության ավարտունության սկզբունքը
- համընդհանուր համագործակցության սկզբունքը
- թեմաների բազմազանության սկզբունքը
- տարատարիքության և տարամակարդակության սկզբունքը
- բազմալեզու ուսուցման սկզբունքը:

Վիտալի Դյաչենկոն ձեռնամուխ է եղել ուսուցման համագործային եղանակի կառուցմանը: Ամենևին չնսեմացնելով իր սիրելի Ռիվինի մեթոդիկայի նշանակությունը՝ նա հեղինակում է նոր մեթոդիկա: Այն կառուցված է գիտելիքների անհապաղ և անհետաձգելի փոխանցման սկզբունքի վրա և Դյաչենկոյի կողմից դրվել է համագործային ուսումնական պարապմունքների կազմակերպման տեխնոլոգիայի հիմքում, որը գիտնականն անվանեց նոր մանկավարժական տեխնոլոգիա:

Բազմազան ուսումնական պարապմունքները կարելի է բաժանել 3 տեսակների՝ խմբային, անհատական և կոլեկտիվ՝ դրա համար օգտագործելով 3 նոր հասկացություն՝ ընդհանուր ճակատ, ուսումնական երթուղի, սովորողների ժամանակավոր կոոպերացիաներ [6, 40]:

Ընդհանուր ճակատ՝ իրավիճակ, երբ ուսումնական խմբի բոլոր անդամները յուրաքանչյուր կոնկրետ պահի անում են միևնույն բանը, միևնույն եղանակներով, միևնույն միջոցներով, դրա համար հատկացված միևնույն ժամանակում:

Ուսումնական երթուղի՝ ուսումնական ծրագրի բաժինների ու թեմաների ուսումնասիրման որևէ ենթադրելի հաջորդականություն:

Սովորողների ժամանակավոր կոոպերացիաներ՝ ոչ հաստատուն կազմով խմբեր որևէ կոնկրետ ուսումնական խնդրի լուծման համար:

Խմբային ուսումնական պարապմունքները, որոնք հիմա գերակշռում են կրթական հաստատությունների ճնշող մեծամասնությունում, բնութագրվում են ընդհանուր ճակատի առկայությամբ: Խմբային ուսումնական պարապմունքների մյուս հատկանիշները պարապմունքները ընդհանուր ճակատով կազմակերպելու հետևանք են: Օրինակ՝ բոլորի համար ուսումնական ծրագրի յուրացման միևնույն երթուղին, ուսումնական պարապմունքների ընդհանուր սկիզբն ու ավարտը, հանգստի և ընդմիջումների համար հատկացված ընդհանուր ժամանակահատվածը:

Համագործային ուսումնական պարապմունքներին հատուկ է ընդհանուր ճակատի բացակայության իրավիճակը, այսինքն՝ ուսումնական խմբի անդամները, որպես կանոն, իրականացնում են տարբեր նպատակներ, ուսումնասիրում են ուսումնական նյութի տարբեր հատվածներ, տարբեր եղանակներով, միջոցներով: Դրա հետևանքով տարբեր աշակերտներ ուսումնական դասընթացը յուրացնում են տարբեր երթուղիներով:

Ընդհանուր ճակատի բացակայության հասկացությունը հնարավորություն է տալիս տարբերելու խմբային պարապմունքները մյուս երկուսից՝ համագործային և անհատական պարապմունքներից: Բացի այդ հասկացությունը համագործային և անհատական պարապմունքների յուրահատկությունները տարանջատելու համար բավարար չէ: Եթե չկա ընդհանուր ճակատ, բայց երթուղին բոլոր սովորողների համար նույնն է մնում, ապա ստացվում է անհատական պարապմունքների մի տարատեսակ: ժամանակավոր կոոպերացիա հասկացության ներմուծումը թույլ է տալիս ըմբռնել համագործային պարապմունքների առանձնահատկությունը ինչպես խմբային պարապմունքների, այնպես էլ անհատական պարապմունքների համեմատ:

Համագործային ուսումնական պարապմունքների նախագծման, կազմակերպման և վերլուծության համար նպատակահարմար է ներմուծել ընդհանուր ճակատի բացակայության մասշտաբ հասկացությունը, որը որոշվում է ուսումնական ծրագրի հատվածի ծավալով և դրա ուսումնասիրման համար հատկացվող ժամանակով: Կարելի է առանձնացնել ընդհանուր ճակատի բացակայության 7 մակարդակ:

Համագործային ուսումնական պարապմունքների սկզբունքները

Համագործային ուսումնական պարապմուքների գլխավոր սկզբունքն է՝ յուրաքանչյուրը նպատակ է, յուրաքանչյուրը միջոց է: Դա նշանակում է, որ այն ամենը, ինչ արվում է ուսումնական խմբում, պետք է արվի հանուն յուրաքանչյուրի և յուրաքանչյուրի միջոցով: Ըստ էության, այս սկզբունքի մեջ ընդհանրացված է երկու սկզբունք՝ ուսուցման անհատականացման և համընդհանուր համագործակցության:

Առաջին՝ ուսուցման անհատականացման սկզբունքի պահանջն այն է, որ ուսումնական գործընթացը կառուցվի յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները՝ նրա փորձը, հետաքրքրություններն ու հնարավորությունները, ծրագրի պահանջներն ու ծնողների պատվերը հաշվի առնելու հիման վրա: Պարտադիր պայմանը՝ տարբեր աշակերտներ պետք է հնարավորություն ունենան ուսումնասիրելու միևնույն բովանդակությունը, լուծելու միևնույն դիդակտիկական խնդիրը տարբեր եղանակներով:

Համընդհանուր համագործակցության սկզբունքը նշանակում է, որ յուրաքանչյուր սովորող կատարում է իր ծրագիրը ուսումնական գործընթացի մյուս մասնակիցների հետ տարբեր փոխազդեցությունների միջոցով և տարբեր կոոպերացիաներում՝

հնարավորություն տալով մյուսներին իր միջոցով հասնելու իրենց նպատակներին: Սա ցանկություն չէ, այլ տեխնոլոգիական պահանջ. մի սովորողի՝ մյուսների հետ հաջող և արդյունավետ փոխազդեցությունը պետք է ապահովվի կազմակերպական առումով: Համագործակցությունը երևան է գալիս այն ժամանակ, երբ ուսումնական խմբում գիտակցաբար առանձնացվում են տարբեր դիրքեր, յուրացվող բովանդակությունը բաշխվում է տարբեր դպրոցականների և մանկավարժների միջև: Այսպես ապահովվում է անհատական երթուղիների իրականացումը, առաջանում է հնարավորություն յուրացնելու ուսումնական նյութը սեփական տեմպով և միջոցներով:

Համահավաք ջոկատներ

Համագործային ուսումնական պարապմունքների հիմքը սովորողների ժամանակավոր կոոպերացիաներն են, որոնք ստեղծվում են որևէ որոշակի ուսումնական նպատակի իրականացման համար:

Կառավարման կենտրոն

Ուսումնական գործընթացի մասնակիցների անցումը մի ժամանակավոր կոոպերացիայից մյուսը համակարգվում է կառավարման կենտրոնում: Կառավարման կենտրոնը հատուկ հատկացված տեղ է, որտեղ լուծվում են կառավարման խնդիրներ, դրա վրա է դրված ուսումնական գործընթացի կազմակերպման պատասխանատվությունը:

Ուսուցչական կոոպերացիա

Տարանջատ աշխատող մանկավարժների փոխարեն գործում է ուսուցչական կոոպերացիան: Այն՝ որպես մեկ օրգանիզմ, կատարում է ուսումնական, կազմակերպական, կառավարման, մեթոդական գործառույթներ՝ բաշխելով դրանք կոոպերացիայի անդամների միջև:

Ուսումնական առարկայի բովանդակության կառուցվածքը

Համագործային ուսումնական պարապմունքներ կազմակերպելու համար անհրաժեշտ է ուսումնական ծրագիրը բաժանել առանձին թեմաների և բաժինների ու դրանք բաշխել սովորողներին: Ուստի պահանջվում է հատուկ ձևով կառուցել ուսումնական ծրագրերի բովանդակությունը:

Տարբեր ուսումնական երթուղիներ կազմելիս, թեմաների և բաժինների միջև բաշխելիս և վերաբաշխելիս անհրաժեշտ է հաշվի առնել թեմաների միջև հնարավոր տրամաբանական կախվածությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ակնհայտորեն պարզել ուսումնական առարկայի բովանդակության կառուցվածքը, որն արտացոլում է ուսումնական առարկայի բաղադրիչ միավորները որոշակի կապերով ու կախվածությամբ:

Ուսումնական առարկայի բովանդակության յուրացման երթուղիները

Ելնելով ուսումնական ծրագրի բովանդակության կառուցվածքից՝ կարելի է կազմել այդ ծրագրի բովանդակության ուսումնասիրման տարբեր հաջորդականություններ: Յուրաքանչյուր այդպիսի հաջորդականություն կոչվում է ուսումնական ծրագրի յուրացման երթուղի:

Համագործային ուսումնական պարապմունքների ընթացքում ծագող հնարավոր դժվարությունները

Համագործային ուսումնական պարապմունքներին հատուկ է ընդհանուր ճակատի բացակայության իրավիճակը, այսինքն՝ ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի առջև դրվում են տարբեր նպատակներ, ուսումնասիրման համար նախատեսված ուսումնական նյութի տարբեր հատվածներ: Առաջին հայացքից թվում է, որ անհնար է կազմակերպել ուսումնական գործընթացը, եթե ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ զբաղված է առանձին գործով: Համագործային ուսումնական պարապմունքների ընթացքում ուսուցիչը հանդես է գալիս որպես ուսումնական գործընթացը վերահսկող, ուղղորդող սուբյեկտ, քանի որ ուսուցման կազմակերպման համագործային եղանակը ուսումնական խմբի անդամների համագործակցության վրա հիմնված ուսումնական գործընթաց է: Աշխատանքի ճիշտ կազմակերպման և իրականացման դեպքում ուսուցչի հիմնական գործառույթը դառնում է ուսումնական գործընթացի վերահսկողությունը, քանի որ ուսուցանելը դառնում է արդեն սովորողների խնդիրը: Ներկայացնենք, թե ինչ հնարավոր դժվարություններ կարող են հանդիպել ուսումնական գործընթացում՝ ուսուցումը համագործային եղանակով իրականացնելու ընթացքում:

Համագործային ուսումնական պարապմունքների իրականացման հիմքում առաջին հերթին ընկած է դիդակտիկ նյութի նախապատրաստումը:

Թեմաների փոխհաղորդման մեթոդիկայով աշխատելու համար հարկավոր է ուսումնասիրման համար նախատեսված թեմաների վերաբերյալ տեքստեր ձևակերպել: Այս մեթոդով առավել հարմար է իրականացնել լեզվական գիտելիքների ուսուցումը: Ուսուցիչը պետք է ինքը ձևակերպի համապատասխան տեքստերը այնպես, որ դրանք առանց դժվարության ընկալվեն սովորողների կողմից՝ առանց անհասկանալի հարցերի ու դժվարությունների ի հայտ գալու: Ուսուցչից պահանջվում է մանրակրկիտ աշխատանք տանել այդ տեքստերի ստեղծման ուղղությամբ՝ տեքստերը կազմելով սովորողների տարիքին, ընկալումներին համապատասխան:

Ռիվինի հակադարձ մեթոդիկայով աշխատելու դեպքում սովորողներին տրվում է թեման և այդ թեմայի մանրամասն պլանը: Սովորողից պահանջվում է պլանի կետերի համաձայն վերականգնել թեմայի բովանդակությունը, ձևակերպել տեքստը: Այս դեպքում աշխատանքի արդյունավետությունը կրկին կախված է ուսուցչից, որի խնդիրն է այնպես մշակել և ներկայացնել պլանի կետերը, որ աշակերտները կարողանան ստանալ թեմայի ամբողջական տեքստը:

Ուսումնական պարապմունքներ կազմակերպելիս օգտագործում են նաև **հասկացման բերող քարտերի մեթոդիկան:** Հասկացման բերող քարտերը հատուկ տեսակի քարտեր են: Այս քարտերի օգտագործումն ուղղված է թեմայի ըմբռնումն ապահովելուն: Այս դեպքում նորից ուսուցչից պահանջվում է այնպիսի հարցերի ու առաջադրանքների համակարգի ստեղծում, ինչը կօգնի կազմակերպել հասկացման գործընթացը: Ուսուցիչը պետք է կարողանա այնպես կազմել հարցերն ու առաջադրանքները, որ առաջադրանքների կատարման գործընթացը հանգեցնի թեմայի ըմբռնմանը:

Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայով աշխատելու համար հարկավոր է պատրաստել այնպիսի քարտեր, որոնք բոլորը միասին ներառեն հարցերի, առաջադրանքների այն տեսակները, որոնք նախատեսված են

պարտադիր յուրացման համար: Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի պահանջներից մեկն էլ առավել կարևոր հարցերի կրկնությունն է տարբեր անհատական հանձնարարություններում, որը հնարավորություն է տալիս սովորողին տարբեր զուգընկերների հետ քննարկել միևնույն հարցը, անհրաժեշտության դեպքում կարողանալ ճշգրտել հասկացածը: Աշխատանքի ընթացքում միևնույն հարցի հաճախակի կրկնությունը հաճախ առաջ է բերում սովորողների դժգոհությունը: Նրանց պատկերացմամբ, ավելորդ անգամ կատարելով միևնույն առաջադրանքը, իրենք անտեղի ժամանակ են կորցնում: Այս, ինչպես նաև մի շարք այլ մեթոդիկաներով (Ռիվինի, Ռիվինի հակադարձ մեթոդիկաներ) աշխատելու ընթացքում ծագող խնդիրներից մեկն էլ այն է, որ փոփոխական կազմով զույգերով աշխատանքի ընթացքում հաճախ փոխստուգման, պարբերության կամ պլանի հերթական կետի մշակման համար պատրաստ են լինում կենտ թվով աշակերտներ: Տվյալ դեպքում սովորողները պետք է սպասեն այնքան, մինչև որևէ մեկն ազատվի: Ստացվում է, որ սովորողները ինչ-որ պահի մնում են ազատ, ինչն էլ հանգեցնում է ժամանակի անտեղի կորստի ու ավելորդ աղմուկի:

Թեմաների փոխհաղորդման մեթոդիկան նախատեսված է փոփոխական կազմով զույգերով կազմակերպված աշխատաձևով ուսումնական նյութի տեսական մասի յուրացման համար: Աշակերտներից յուրաքանչյուրին տրվում է որևէ թեմա, հանձնարարվում ինքնուրույն ուսումնասիրել այն, հանձնել ուսուցչին, այնուհետև ուսուցանել ընկերոջը: Հիմնական խնդիրը, որը ծագում է ուսումնական պարապմունքի ընթացքում այս մեթոդով աշխատելու ընթացքում, որևէ աշակերտի կողմից թեման շուտ վերջացնելն է, որից հետո նա ստիպված է լինում սպասել այն աշակերտին, որը պետք է վերջացնի իր թեմայի ուսումնասիրությունն ու անցնի թեման իրեն ուսուցանելու փուլին: Խոսքն այստեղ սովորողի ազատ մնալու մասին չէ, այդ հարցը կարելի է լուծել լրացուցիչ առաջադրանքներ հանձնարարելու միջոցով, պարզապես որոշ երեխաներ անհամբերությամբ են սպասում, թե երբ են անցնելու միմյանց ուսուցանելու փուլին, իսկ զուգընկերներից մեկի դանդաղ աշխատելու արդյունքում երբեմն մյուսի մոտ կորչում է հետաքրքրությունն ու սովորեցնելու ցանկությունը:

Ուսուցումը համագործային ուսումնական պարապմունքների միջոցով կազմակերպելու ընթացքում ծագած հիմնական դժվարություններից մեկն էլ գնահատումն է. խոսքը ոչ թե գիտելիքների գնահատման, այլ թվանշանի մասին է: Չէ՞ որ որոշ բաժիններ սովորողը յուրացնում է ոչ թե ուսուցչի, այլ իր զուգընկերոջ միջոցով (թեմաների փոխհաղորդման մեթոդիկա, առաջադրանքների փոխանակման մեթոդիկա), ինպես նաև անցած նյութի կրկնության, ամփոփման համար ուսուցչի անմիջական ներկայության անհրաժեշտություն չի զգացվում (անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկա): Ահա, թե ինչու երբեմն ուսուցիչը դժվարանում է գնահատել սովորողին. հնարավորություն չի ստեղծվում ընթացիկ գնահատականներ նշանակել, և սովորողները գնահատվում են միայն ինքնուրույն, ստուգողական աշխատանքների, ստուգարքների միջոցով:

ԳԼՈՒԽ 2

Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկա

Ցանկացած գիտելիք կրկնելու, ամրապնդելու համար կան բազմաթիվ միջոցներ, որոնք կարելի է օգտագործել ուսուցման կազմակերպման թե՛ անհատական, թե՛ զույգային, թե՛ խմբային ձևերով՝ գրավոր և բանավոր կերպով [1, 5]: Փորձը ցույց է տվել, որ անցած նյութի կրկնությունը կազմակերպելու ամենանպատակահարմար ձևը անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան է: Բացատրությունը հետևյալն է. կրկնությունն այս մեթոդիկայով կազմակերպելու դեպքում.

- Աշակերտն ինքնուրույն է կրկնում յուրացրած նյութը:
- Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր աշակերտ անկախ է, և նրա աշխատանքի արագությունը կախված չէ մյուսներից:
- Աշակերտը հնարավորություն ունի իր ինքնուրույն աշխատանքի արդյունքը ստուգելու և գնահատելու ընկերոջ օգնությամբ, և ինքն իր հերթին օգնում է ընկերոջը նույն հարցում:
- Կրկնության ընթացքն ուղղորդվում է ուսուցչի կողմից և կազմակերպվում է դասարանում: Կրկնությունը կազմակերպողը (տվյալ դեպքում ուսուցիչը) ինքն է առաջարկում հարցերի շրջանակը, որի սահմաններում պետք է կազմակերպվի կրկնությունը:
- Նախապես մտածված և մշակված հարցերի, առաջադրանքների միջոցով կրկնողին հնարավորություն է տրվում աշխատելիս անդրադառնալ նյութի ինչպես ամենակարևոր խնդիրներին, այնպես էլ բոլոր մանրամասներին, որոնք անհրաժեշտ են նյութի լիակատար յուրացման համար:
- Այս մեթոդով կազմակերպված կրկնության ժամանակ կրկնվող նյութի ողջ ծավալը պարտադիր է դառնում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար, և այս խնդիրը լուծվում է ինքնըստինքյան, քանի որ ամեն մի աշակերտ աշխատաքային այս փուլում աշխատում է անհատական հանձնարարությունների ներկայացված բոլոր քարտերով, որ ինքնին ընդգրկում է նյութի ողջ ծավալը:
- Ուսուցիչը կրկնությունը այսպես կազմակերպելիս և՛ ազատ է, և՛ կարող է առաջացած տարբեր բնույթի հարցերի դեպքում (կազմակերպչական, խորհրդատվական) օգնել աշակերտներին:
- Կրկնության հենց ընթացքը կարող է ախտորոշիչ դեր ունենալ ուսուցչի համար: Աշակերտը, որը գրեթե բոլոր հարցերին պատասխանելիս ստիպված է լինում օգտվել ուսումնական ձեռնարկներից, դիմել ուսուցչի կամ ընկերների օգնությանը, դադարեցնում է կրկնությունը և խմբից դուրս գալով՝ շարունակում է յուրացնել նույն նյութը: Այսպիսով, ուսուցիչը հնարավորություն է ունենում կանխելու նյութը լիովին չյուրացրած աշակերտի՝ ստուգողական, ստուգիչ, քննական աշխատանքներին մասնակցելը:

Աշխատանքի կազմակերպումը

Անհատական հանձնարարությունների (ԱՀ) փոխստուգում կազմակերպելու համար անհրաժեշտ է.

- աշակերտների որոշակի խումբ, որը ուսումնասիրած և ավարտած լինի որևէ բաժին,

- դիդակտիկ նյութեր, տվյալ դեպքում՝ անհատական հանձնարարությունների քարտեր,
- հաշվառման աղյուսակ,
- աշխատանքային պլան:

ԱՀ փոխստուգման մեթոդիկայով աշխատանքը կարելի է բաժանել 2 փուլի, որոնք պարբերաբար կրկնվում են կամ կարելի է ասել՝ հաջորդում են իրար.
1-ին փուլ – կրկնություն ԱՀ-ով - անհատական աշխատանք,
2-րդ փուլ - փոխստուգում – աշխատանք զույգերով:
1-ին փուլ — կրկնություն ԱՀ-ով: Յուրաքանչյուր աշակերտ վերցնում է ԱՀ մեկ քարտ, գրանցում կատարում հաշվառման աղյուսակում և սկսում իր աշխատանքը: Հաշվառման աղյուսակը կարող է վարել ուսուցիչը կամ ուսումնական խմբի աշակերտներից մեկը:

Իր քարտում նշված հարցերի օգնությամբ նա վերհիշում է սովորած նյութը: Թե՛ հարցերը, թե՛ դրանց պատասխանները գրառում է տետրում: Այս փուլում որևէ բան վերհիշելու, ճշտելու համար աշակերտը կարող է օգտվել ուսումնական տարբեր աղբյուրներից, որոնց միջոցով յուրացրել է տվյալ նյութը:
2-րդ փուլ - փոխստուգում: Անհատական հանձնարարությունն ավարտած աշակերտը սկսում է փոխստուգումը զույգում: Առաջին զույգում իր անհատական հանձնարարության առաջին հարցը ներկայացնելով ու քննարկելով՝ փնտրում է նոր ընկեր իր հաջորդ հարցը քննարկելու համար: Եվ այսպես իր քարտի յուրաքանչյուր հարցը քննարկելիս փոխում է զույգը: Զույգի հետ ամեն մի հանդիպման ժամանակ աշակերտը ոչ միայն ներկայացնում է իր հերթական հարցը, դրան իր տված պատասխանը և այն քննարկում ընկերոջ հետ, այլև լսում է ընկերոջ հարցը, նրա պատասխանը տվյալ հարցին և քննարկում է նրա հետ այդ պատասխանը: Հերթական ամեն մի զույգում աշխատելիս աշակերտն անուղղակիորեն մասնակցում է ընկերոջ անհատական քարտի կրկնությանը՝ վեհիշելով և ամրապնդելով նաև նրա նյութը:

Քարտի բոլոր հարցերի պատասխանների քննարկումն ավարտելուց հետո աշակերտը հանձնում է քարտը, աշխատանքն ավարտելու վերաբերյալ նշում ստանում հաշվառման աղյուսակում և վերցնում հաջորդ քարտը: Այն աշակերտը, որն ավարտում է բոլոր քարտերով աշխատանքը, դուրս է գալիս փոխստուգում իրականացնող խմբից:

Անհատական հանձնարարությունների մեթոդիկայի կիրառումը «Ածական անուն» բաժնի կրկնությունը կազմակերպելիս

«Ածական անուն» բաժնի ԱՀ-ներ կազմելու համար նախապես ստեղծվել է հարցերի և առաջադրանքների հավաքածու: Այս բաժնի համար նախ կազմվում են
հարցերը և առաջադրանքները, որոնք պետք է օգտագործվեն կրկնությունն իրականացնելու համար, ապա՝ անհատական հանձնարարությունների քարտերը:

Հարցաշարն ընդգրկում է ածականին վերաբերող ծրագրային տեսական նյութը: Այն կազմվել է՝ հիմք է ընդունելով դպրոցական դասագիրքը (Ֆ. Խլղաթյան, Լ. Խաչատրյան, Հայոց լեզու, դասագիրք 7-րդ դաս. համար, Երևան, 2006), ինչպես նաև տվյալ բաժինն ուսումնասիրելիս օգտագործված օժանդակ գրականությունը (Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Ձևաբանություն, Երևան, 2008):
Ածականի՝ խոսքի մեջ կիրառության վերաբերյալ կան առաջադրանքներ, որոնցում չի պահանջվում նշել այդ ածականների շարահյուսական պաշտոնները:

Առաջադրանքներում չենք անդրադարձել նաև ածականի փոխանվանական կիրառությանը, որպես այդպիսին՝ նրա քերականական հատկանիշներին, շարահյուսական դերին, իսկ հարցաշարում սրա վերաբերյալ տրվել է մեկ հարց, որն ակնկալում է զուտ տեղեկատվական բնույթի պատասխան:

Ածականի կրկնության համար կազմված հարցաշարը, բնականաբար, ավելի փոքր է, քան գոյականինը՝ պայմանավորված նյութի ծավալով: Հարցաշարն անդրադառնում է ածականի խոսքիմասային իմաստին, ածականի տեսակներին, կազմությանը:

Հարցաշար

1. Ի՞նչ է ցույց տալիս ածականը և ի՞նչ հարցերի է պատասխանում:
2. Ի՞նչ է նշանակում հատկանիշ, ի՞նչ հարցերով կարելի է ճշտել առարկայի հատկանիշները:
3. Առարկայի ինչպիսի՞ հատկանիշ է ցույց տալիս որակական ածականը:
4. Ինչպե՞ս կարելի է համեմատել առարկաների հատկանիշները, ե՞րբ է դա հնարավոր:
5. Որո՞նք են որակական ածականի համեմատության աստիճանները:
6. Ո՞րն է որակական ածականի դրական աստիճանը:
7.Ո՞րն է որակական ածականի բաղդատական աստիճանը և ինչպե՞ս է կազմվում:
8. Ո՞րն է որակական ածականի գերադրական աստիճանը:
9. Ի՞նչ կառույցներով կարելի է կազմել որակական ածականի գերադրական աստիճանը:
10. Շարահյուսական կամ ձևաբանական (բառային) ուրիշ ի՞նչ ձևերով կարելի է արտահայտել ածականի բաղդատական և գերադրական աստիճանների իմաստները:
11. Առարկայի ինչպիսի՞ հատկանիշ է ցույց տալիս հարաբերական ածականը:
12. Կազմությամբ սովորաբար ինչպիսի՞ն է լինում հարաբերական ածականը և ինչո՞ւ:
13. Ըստ կազմության՝ ինչպիսի՞ն կարող են լինել ածականները:
14. Ի՞նչ ընդհանրություն և ի՞նչ տարբերություն կա որակական և հարաբերական ածականների միջև:
15. Խոսքի մեջ ուրիշ ի՞նչ խոսքի մասի դերում կարող է հանդես գալ ածականը:

Այս բաժնի առաջադրանքները կազմվել են այնպես, որ տեսական բոլոր հարցերը արտացոլվեն դրանց մեջ: Դրանք ծավալուն չեն, և տեսական նյութի իմացության դեպքում դրանց կատարումը դժվարություն չի ներկայացնի: Առաջադրանքները վերաբերում են ածականի տեսակներին՝ որակական և հարաբերական, որակական ածականի համեմատության աստիճաններին և դրանց կազմությանը, ածականի կազմությանը:

Այս բաժնի ԱՀ–ները ներկայացված են երկու փաթեթով՝ ԱՀ1-Ա, ԱՀ2-Ա: Առաջադրանքների քանակը ԱՀ1-Ա բոլոր քարտերում հավասար է՝ 6 առաջադրանք: ԱՀ1-Ա քարտերը կազմվել են հարցաշարի հարցերի և առաջադրանքների որոշակի տիպերի համադրությամբ: Այսպես ենք վարվել, քանի որ այս բաժնի հարցաշարը ծավալուն չէ, և նպատակահարմար չէ քարտեր կազմել միայն հարցաշարի հարցերով: Այդ դեպքում ստացված ԱՀ-ների քանակը չի բավարարի աշակերտների համեմատաբար մեծ խմբի հետ փոխստուգում կազմակերպելու համար:

ԱՀ1-երի 1-ին և 2-րդ հարցերը տեսական բնույթ ունեն, իսկ 3-6-րդը գործնական առաջադրանքներ են և վերաբերում են ածականի՝ որպես խոսքի մասի ճանաչելուն, որակական և հարաբերական ածականները միմյանցից տարբերելուն:

ԱՀ 2-Ա փաթեթի յուրաքանչյուր քարտում կան 5 առաջադրանքներ, որոնք վերաբերում են ածականի համեմատության աստիճաններին, հարաբերական ածականների և այլ խոսքի մասերի հարաբերությանը, ածականների բառակազմական պատկերին, խոսքի մեջ ածականի գործածությանը:

Ներկայացնում ենք ԱՀ1-Ա-ի նմուշ - օրինակներ

ԱՀ1 - Ա 1
1. Ի՞նչ է ցույց տալիս ածականը և ի՞նչ հարցերի է պատասխանում:
2. Ո՞րն է ածականի գերադրական աստիճանը:
3. Շարքից ընտրի՛ր ածականները. հասուն, քաղաք, քաղաքային, վազք, հյութալի, հյութեղ, ծանրամարտ, ծանր, երրորդ, մարմարե, գեղեցկանալ, թարմ, խնամք, անխնամ, տգեղ, տգեղություն, բարեկամություն, հարազատ:
4. Գտի՛ր շարքի ավելորդ բառը. տնական, ամառային, հասկանալ, հասկանալի, սպիտակ, ալեհեր, քաղցր:
5. Գրի՛ր առանձին շարքերում որակական և հարաբերական ածականները.
թավշյա, ձմեռային, գեղեցիկ, փափուկ, ազնիվ, երկաթե, մաքուր, բոպեական, ժամանակավոր, մեծ, փայտաշեն, պարզ, ձվաձև, ադամանդե, քաղցրահչյուն, սառը, խաղաղ, զվարթ:
6. Ընտրի՛ր գերադրական աստիճանով ածականները. ամենաուրախ, ազնվագույն, դեղնագույն, ամենամեղմ, առավելագույն, անգույն, երփնագույն, ամենամեծ:

Ա Հ1- Ա2
1. Ո՞րն է որակական ածականի դրական աստիճանը:
2. Կազմությամբ սովորաբար ինչպիսի՞ն է լինում հարաբերական ածականը և ինչո՞ւ:
3. Շարքից ընտրի՛ր ածականները. խորդուբորդ, մակերևույթ, ողորկ, հարթեցնել, հազվագյուտ, հարստություն, գոռոզամտություն, մեծամիտ, նյարդ, նրբազգաց, խո- հեմ, խոհ, պղնձե, լուսամփոփ, լուսեղ, Վարդգես, գանգրահեր, շատախոսություն, շատախոս:
4. Գտի՛ր շարքի ավելորդ բառը. սև, գույնզգույն, երփներանգ, գունավոր, գույն, անգույն, գունագեղ:
5. Գրի՛ր առանձին շարքերում որակական և հարաբերական ածականները. հայրենի, արական, դեղնավուն, մաքուր, անավարտ, դարչնագույն, ավարտուն, բետոնապատ, հողե, ցածր, բարձր, ագահ, բարեսիրտ, ցողաթաթախ, ավարտական, ներողամիտ, ապուշ, մշտական:
6. Ընտրի՛ր բաղդատական աստիճանով ածականները. ավելի մաքուր, պակաս մեծ, առավել գեղեցիկ, ավելի հետաքրքիր, ամենահետաքրքիր, բոլորից բարձր, ամենամաքուր, բարձրագույն, ավելի լուսավոր:

Մեթոդիկայի կիրառման ընթացքում ի հայտ եկող խնդիրներ

Աշխատանքի ընթացքում որոշ աշակերտներ գրեթե բոլոր հարցերին պատասխանելիս պարբերաբար դիմում են իրենց ընկերների օգնությանը: Ընդ որում, նրանց մեջ ծագած հարցերն առնչվում են տարբեր առաջադրանքների կատարմանը: Սա ոչ թե մոռացության, այլ գիտելիքների պակասի հետևանք է: Սա հնարավորություն է տալիս կանխելու նյութը լիովին չյուրացրած աշակերտի՝ ստուգողական, ստուգիչ աշխատանքներին մասնակցելը:Այս դեպքում դադարեցնում ենք կրկնությունը, և այդ աշակերտները, դուրս գալով խմբից, շարունակում են յուրացնել նույն նյութը:

Առաջացած խնդիրներից մեկն էլ այն է, որ փոխստուգման պատրաստ լինում են կենտ թվով աշակերտներ: Չնայած մեթոդիկան թույլ է տալիս, որ նման աշակերտների հետ զույգեր կազմեն ուսուցիչները,

բայց նպատակահարմար է, որ աշակերտները սպասեն այնքան ժամանակ, մինչև որևէ մեկն ազատվի, կամ նրանց տրվի անհատական հանձնարարության մեկ ուրիշ քարտ, որպեսզի նրանք աշխատեն դրանց վրա այնքան ժամանակ, մինչև ինքնուրույն աշխատանքն ավարտեն անհրաժեշտ թվով աշակերտներ:

Ժամանակի խնայողության առումով քարտերի իրականացման առաջին փուլը (ինքնուրույն աշխատանքը) աշակերտներին հանձնարարում ենք տանը, իսկ դպրոցում իրականացնում ենք միայն փոխստուգումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ընտրված թեման և գրելով հետազոտական աշխատանքը՝ եկանք հետևյալ եզրահանգումների՝

- ✓ Անհրաժեշտ է և արդյունավետ ուսուցման ավանդական եղանակներին ու մեթոդներին զուգահեռ կիրառել նաև այլ մեթոդներ՝ հաշվի առնելով թեմայի բովանդակությունը, ծավալը, դասի նպատակը:
- ✓ Ուսուցման համագործային եղանակը ,իր կառուցվածքային հիմքում ունենալով ուսուցման կազմակերպման բոլոր չորս ձևերը՝ անհատական, զույգային, խմբային և համագործային, նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:
- ✓ Ուսուցման համագործային եղանակի կիրառման դեպքում աշակերտները լայն հնարավորություն են ունենում և՛ ինքնուրույնություն դրսևորելու, և՛ համագործակցելու:
- ✓ Յուրաքանչյուր սովորողի հնարավորություն է տրվում ընդգրկվելու ուսումնական գործընթացի մեջ, ակտիվ աշխատելու: Նա արագ և լավ է յուրացնում նյութը, նաև լավ է մտապահում, երբ ինքն էլ հաղորդում, բացատրում է ուրիշների: Բոլորին հայտնի փաստ է այն, որ ով սովորեցնում է ուրիշներին, սովորում է ինքը:
- ✓ Պետք է ընդունել, որ յուրացրած թեմայի կամ թեմայի որևէ բաժնի կրկնության, գիտելիքների ամրապնդման դաս կազմակերպելիս հետաքրքիր ու արդյունավետ կլինի անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի կիրառումը:
- ✓ Նշված մեթոդիկայով աշխատելու արդյունքում մեծ ձեռքբերում կարող է համարվել նաև այն, որ երեխաները, միասին աշխատելով, դառնում են ավելի ընկերասեր, միմյանց օգնող, հանդուրժող ու միասնական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի որոշ կիրառություններ, Ուսումնադիդակտիկ նյութերի ձեռնարկ ուսուցչի համար 1, Եր. 2009, 120 էջ:

2.Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի որոշ կիրառություններ, Ուսումնադիդակտիկ նյութերի ձեռնարկ ուսուցչի համար 2, Եր. 2009, 102 էջ:

3.Դուդումյան Օ., Բալայան Ա., Ուսումնական գործընթացի կազմակերպման արդի մոտեցում. կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2020, 88 էջ:

4.Կրթության կազմակերպումը XXI դարում, Գիտամանկավարժական ժողովածու, Երևան, Նոյյան տապան, 1998, 63 էջ:

5.Մկրտչյան Մ., Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը ըստ Վ.Դյաչենկոյի, Մանկավարժություն, 2008, N○ 1-2, 5-15 էջեր:

6.Մկրտչյան Մ. Ա., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան, 2011, 148 էջ: